

ՄԻՈՒՆԻԸ ԻՆՉՈՒՄ ԶՈՒՆՈՒՄ ԵՒՆ

ՄՆՈՒՆԻԸ ԻՆՉՈՒՄ ԶՈՒՆՈՒՄ ԵՒՆ

ԿԸ ՏՕՆԵՆԲ

Պագայլն Յ. Առսնեան կր հարցնէր թէ «Իճ-  
ն»-ի համար Հայեր Ս. Ծնունդն ու Մկրտու-  
րիւնը մինեղոյն օրը կը տօնեն, մինչդեռ միւս  
բոլոր յարանուանութիւններ տարբեր օրեր կը  
տօնեն:

Պատմական իրողութիւնը սա՛ է որ Շիստանական  
հին եկեղեցին Յունուար 6 ին կը տօնէր այդ երկու տօ-  
ներն ալ, եւ Հայաստանեայց եկեղեցին հաւասարով մը-  
նացած է այդ վաղեմի աւանդութեան:

Յովնան Ոսկերեան, 386ին Անիոյի եկեղեցոյն  
մէջ բարոյ տաւած աշեն, ակնուկելով Գլխմ.ի 25ին,  
կ'ըսէ. «**Տաղիւ տասը տարի** կայ որ այդ օրը (Գեկս.  
25) յայնի եւ ծանօթ եղաւ մեզի»: Ըսել է որ Յոյն ե-  
կեղեցին ալ 376ին երկու տօները միասին կը կատարէ  
Յունուար 6ին: Ոսկերեան զիսել կուսայ նաեւ թէ նախ  
Հռոմայեցիք թիւն այս փոխադրութիւնը եւ յետոյ իւ-  
րենք՝ Յոյնք: Թէ երկու տօները միասին կը կատարէին  
հին եկեղեցոյ մէջ, սաւոր շօտափելի ապացոյցը այն  
է որ Յոյն եկեղեցին մինչեւ իմայ Յունուար 6 ին կը  
կատարէ Մկրտութեան տօնը:

Իսկ թէ ինչն է համար անջատեցին երկու տօները  
իբարձէ. այս մասին ալ երկու պատմութիւն կայ.

Ա.— Ըստ երուսաղէմի եկեղեցոյն, երկու տօները  
միեւնոյն օրը երկու տարբեր տեղեր կատարելու դժուար-  
ութենէն յառաջ եկած պիտի ըլլայ անջատումը. որով-  
հետեւ ընդմեջ տօնը Քերդնէմէ կը կատարէին, իսկ  
Մկրտութիւնը՝ Յարգանան:

Եւ իբով միեւնոյն օրը (Յունուար 6) Քերդնէմէն  
կամ երուսաղէմէն Յարգանան իջնել, շատ դժուար էր  
այն աշեններ, եւ նոյն իսկ դժուար է այսօր, հակառակ  
ճամբաներու եւ ճամբորդելու սխալների զիրար փոխանե-  
րուն: — Բայց կ'երեւի թէ տախլազտ տեղական պատ-  
ճառ մըն է երուսաղէմի եկեղեցոյն համար. աւելի  
հաւանական է երկուորը:

Բ.— Ըստ Հռոմի եկեղեցոյն, աւելի ծանակալիւ  
պատճառով մը ընտելոյր խախտած են իր աւանդական  
տեղէն:

Գլխմ. 25ին կը կատարէին Սատուրնական տօներ  
(Saturnalia) հերմոս Հռոմի մէջ: Շատ մեծ էր շատ  
ժողովրդական տօն մըն էր այդ, որ մնացած էր մինչեւ  
Չարոզ դար, հակառակ Շիստանուրեան մուսլիմ Հը-  
նում ու տարածումին:

Արդ, Գեկսմ. 25ի այդ հերանոտական նշանաւոր  
տօնը խախտելու պիտուով է որ Քիստոնութեան ա-  
մէնէն նշանաւոր եւ ամենէն ժողովրդական տօնը, Ս.  
Ծնունդը, Յունուար 6 էն փոխադրած են Գլխմ. 25ին:

Բ. Ե.

Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷՆ

ԿԵՂԵԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԵՐՈՒՍԱՂԱՆՄԻ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Ս. Աթոռիս Տնօրէն ժողովը բնագաւառը երթա-  
լով Կիլիկիոյ Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսի առա-  
ջարկին, Սիւրբիոյ մէջ գտնուած եւ Ս. Աթոռէս  
կախուած թեմերու Կիլիկիոյ Կաթողիկոսութեան  
փոխանցումի մասին, Միաբանական Ընդհանուր  
ժողովը ի նիստ հրատարակեց՝ Մարտ 26, ԳԵ. Երեւ-  
հոյ ժամը 4, 30ին: Նիստը տեղի ունեցաւ Պատ-  
րիարքարանի սրահին մէջ, նախապատմութեամբ  
Ամեն. Ս. Պատրիարք շօր եւ ներկայութեամբ 33  
միաբաններու: Տնօրէն ժողովը խնամեալ Տեղե-  
կազրով մը ներկայացուց այս խնդիրը Միաբան-  
ական Ընդհ. ժողովին, որ նկատի առնելով Կի-  
լիկիոյ Կաթողիկոսութեան Սիւրբիոյ մէջ կազմա-  
կերպութեան օժանդակելու պարտքը Ս. Աթոռիս  
կողմէն, միաձայն հաւանութեամբ որոշեց Սիւ-  
րբիոյ երուսաղէմապատկան թեմերը փոխանցել  
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Ե. Ս. Օծուրթեան Տ.  
Սահակ Կաթողիկոսին իրաւասութեան տակ զնե-  
լով եկեղեցիներն, Առաջնորդարաններն ու Դպր-  
բոցները: Իրենց բովանդակութեամբ:

Փոխանցումը պիտի սկսի Պերուրէն, քանի որ  
այդ թեմը կազմակերպուած կը համարուի Գեր-  
եղոյնէ եկաւ. Կարօտանի Առաջնորդական պաշտօ-  
նի կողմէն իբրև փոխանորդ Ե. Օծուրթեան:  
Փոխանցումը պաշտօնապէս կատարելու հա-  
մար մասնաւոր անձ պիտի զրկուի Պերուրթ Ս.  
Պատրիարք շօր կողմէն:  
Միաբանական Ընդհ. ժողովոյ որոշումը ան-  
միջապէս հեռագրուեցաւ Վեհ. Սահակ Կաթողի-  
կոսին, Պերուրթ:

Ե. Օծուրթեան Սահակ Կրդ., Պերուրթ.

Միաբանական Ընդհանուր ժողովը իր պատրուան  
նիստին մէջ միանայնութեամբ որոշեց Սիւրբիոյ թեմեր  
փոխանցել եւ երթարկել Չեր Ս. Օծուրթեան իրաւա-  
ստութեան:

ՊԱՏՐԻԱՐԿ ԴՈՒՐԵԱՆ

Պատասխանը.

1929, Մարտ 27, Պերուրթ.

Ե. Ամենապատուութեան Գուրեան Պատրիարք:

Չեմապէս շնորհակալ եմ Ձեր Ամենապատուութեան  
եւ Միաբանութեան իրենց բարեղէտ որոշման համար,  
ներեւում եղբայրակցութեան այն բարձրագոյն քն-  
նութեամբ, որ անցին օժանդակութիւն մըն է Կիլիկիոյ  
Կաթողիկոսութեան վերակազմութեան համար:

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Գ Ո Ւ Ր Ե Ա Ն Յ Ո Ր Ե Լ Ե Ա Ն

Դուրեան Յորեկանի կեդրոնական Յանձնա-  
ժողովը որոշեց Դուրեան Մասենապարսեան սեղը,  
ժառանգրց. վարժարանի կամ Զամ-թաղի և Տպա-  
րանի միջև, 18 մէկր ճակատով, ղէպի Արեւելք,  
և 25 մէկր խորքով, որուն յատակագիծը կը  
պարտատուի ճարտարապետին կողմէն:

Դուրեան Մատենադարանի մէջ պիտի հաւա-  
քուին բոլոր Զեռագիր և Տպագիր գործեր, թեր-  
թիր և հանդէսներ: Մատենադարանը պիտի ու-  
նենայ նաև Թանգարանի (տառն) բաժին մը, ուր  
պիտի դասաւորուին հնագիտական առարկաներ:

ԳՈՒՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ շինութեան Ի նը-  
պաստ նուիրած են.

- |   |                    |
|---|--------------------|
| 1. Կիլիկիոյ Վեճ. Զայրապետը Տ.                         | Անգլ. Ասկի         |
| Տ. Սահակ Կաթողիկոս                                    | 50.—               |
| 2. Զեղեանց բարեգործ Պր. Պեա-<br>րոս Զ. Կրէտ (Վալիարա) | 1000.—             |
| 3. Վեմ. Արմենակ Պէյ Կամաւ-<br>բական (Ավեմանլիլա)      | Եղպ. Ասկի<br>100.— |
| 4. Գեր. Տ. Վասիլաբուհ Եպո.<br>Քիոյարեան (Փարիզ)       | 2.—                |
| 5. Տաքթ. Յոսէֆի Պէրպլեան<br>(Վալօնա)                  | 1.—                |
| 6. Տիար Գրիգոր Ֆէրմանեան (Խ-<br>կէնէրուց)             | Յումի<br>100.—     |

Ըստ որոշման Յոր. կեդր. Յանձնաժողովին,  
Դուրեան Մասենապարսեան շինութեան հազար Անգ-  
լիական սակի նուիրողներուն յիշատակը մշտնա-  
ջենաւորելու համար թէ՛ մարմարեայ առանձին  
արձանադրութիւն պիտի դրուի Մատենադարա-  
նին ներքը և թէ՛ նուիրատուին իւզաների պատ-  
կեցը. 500 սակի նուիրողներուն միայն իւզաների  
պատկեցը, իսկ 500 սակէն նուազ նուիրողնե-  
րուն անուանց ցանկը պիտի քանդակուի քարի  
վրայ:

Ս. ՅԱԿՈՒԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Ներուսողէմի Ֆրանչիսկան միարանութեան  
մեծաւոր (Կիւսթոս) Զայր Սքելլիօ Մարօթիս  
Ամեն. Ս. Պատրիարք Զօր նուիրեց Golubovich-ի  
Biblioteca bio-bibliografica della Terra Santa-ի 10  
հատոր գործը, յատկապէս կազմուած, ինքնա-  
գիր Զօնով, Ն. Ամեն. Արքայապետին Բանանա-  
յութեան յիմնամտայ Յորեկանին առթիւ:

Ուրախ ենք որ Սիմոնի կողմէն ուղղուած  
կըր, Ս. Յակոբի Մատենադարանը ճոխացնելու  
մասին, ապարդիւն չլինայ:

Այս անգամ կ'արձանագրենք հատորաւոր  
գործերու երկու մեծ նուիրատուութիւններ. մին՝  
Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցւոյ Church  
Periodical Club-ի վարիչ (Նիւ Եորք) Miss Mary Thom-  
ասի կողմէն Դոմինիկական և Ենանիկական  
Հայերու գործերուն անգլիերէն թարգմանու-  
թիւնը 39 հատոր: Իսկ միւսը Նիւ Եորքցի Miss  
Horace Block-ի կողմէն՝ Արքի Անգլիկոս Աս-  
տածարանուրեան 39 հատորները:

Տիարք Թելեան Եղբարք, Մէթր Միհրան  
(Աղէքանդրիա) և Անտոն (Կ. Պոլիս), Ս. Աթոռիս  
Մատենադարանին նուիրեցին Զեռագիր մը:  
«Համառօտ Պատմութիւնք», որք վրայն դնծա-  
մեծ գործոց ընտիր Իշխանին Քրիստոսազօր Յա-  
րութիւն Ամերայի Պէդեան Կոստանդնուպոլ-  
սեցւոյ, որ ծագեցաւ յաւուր մեծազօր Սուլթան  
Մահմուտ Արքայի Օսմանեան Ի Պոլիս:

Գրողն է Յովնանէն Ծախիկեան Վանցի:

Պրն. Պ. Պէրզեան, պատասխանելով Սիմոնի  
կոչին, Պրնէն և ժրնէվի Հայ Գպարցի հրատա-  
րակութիւններէն մեր մատենադարանին զրկած է  
ճանաչել գրքոյնը:

1.— Զայրոց, Պրնէն և ժրնէվ, Զուլցե-  
րիա, Տպ. «Մասիս», Փարիզ, 1926, 8° էջ 23:

2.— École Arménienne, Beguins et Genève,  
Suisse, Imp. Soci. Gen. d'Imprimerie, Genève,  
1925, 8° p. 24.

3.— École Arménienne, Beguins et Genève.  
պատկերագրք Այլուօմ մը, լուսարանութիւններով  
Տպոյ. 1928 Իօզն, 8° էջ 88:

4.— Դաստիարակութիւն և Անճնասպառնութիւն  
Տղոց. Գ. Ա. Մալաթեան, հրատի. և Տպոյ. Հայ  
Գպարց Պրնէն և ժրնէվ, Զուլցերիա, 1929. 8°  
էջ 72:

Բոլոր նուիրատուներուն սրտագին շնորհա-  
լուծիւններ:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Վսեմաշուր Արմենակ Պէյ Կամարական Զակա-  
զիկի իւրակերտ Սուր խոջ Եկեղեցիին համար երե-  
սուներիկ կտոր Եկեղեցական մատականեր գնած ըը-  
լալով, զիրբիրու արժէքէն զատ երեսուն եղիպտա-  
կան սակոյ նուիրատուութիւն մը ըրած է Սուրբ  
Աթոռոյ Տպարանին:

Տպարանի Տեսչութիւնը հաճելի պատակաւու-  
թիւն կը համարի հրատարակու շնորհակալութիւն  
յայտնել Նորին Վսեմութեան իր այս վեճանձն նուէ-  
րին համար:

ՏՊՆ ՍՐԻՈՅ ՎԱՐԳԱՆԱՆՅ ԶՕՄՎԱՐԱՅ

Վարդանանց տունը հանդիսաւորապէս կա-  
տարուեցաւ Արքոց Յակոբեանց Տաճարին մէջ,  
որու նախատեսակին, Դ. Կրկոյ, նախագահեց  
Ամեն. Ս. Պատրիարք Զայրը: Ել. աւստ (Մարտ  
15) Ս. Պատարագը մատոյց ժառանգաւորաց Վար-  
ժարանին Փոխ-Տեսուչ Զոգ. Տ. Կիւրեղ Վրդ.  
Խարյէլեան, իսկ աւուր պատշաճի քարոզը խօ-  
սեցաւ Բարզէն Արքայուն Ս. Պատարագի աւար-  
տումին կատարուեցաւ համալգային պաշտօն  
հոգեհանգստեան:

Իսկ Մարտ 15, Ռ.բ. գրիչը, ժառանգաւո-  
րաց Վարժարանին ուսանողները Վարժարանի ըն-  
դարձակ սրահին և վանական շրջանակին մէջ  
ներկայացուցին Տիգրան Մանապիւնի Վարդան  
Մամիկոնեան Ողբերգութիւնը, Բրչն. Մատթէօս Սար-  
կաւադի ղեկավարութեամբ: Գերերուն ծանր մա-  
սը ստանձնած էին Զորրոզ Դասարանի ուսա-  
նողներ, որոնք Երևան բերին խօսելու և ար-

տայայտուկու յառաջից ընդունակութիւնները:  
 Արեւիկայի մասին զանազան միջոցներով  
 մէջ երբորդ Գառնանէն վաճան կիւրիւզեան հի-  
 անայի որէն կատարեց պահապանութեան տրամադրու-  
 զերը:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԻ**

● 12 Մարտ 1929, Երեւելարթի. Թամազան Պաշ-  
 րամի առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը,  
 հետն ունենալով Փոխանորդ Տ. Մկրտիչ Սրբա-  
 զանն, ու Տ. Տ. Սահակ, Մուշեղ, Խորէն և Ա.  
 Թարգման Տրդատ վարդապետները, շնորհաւո-  
 րական այցելութիւն տուաւ Երուսաղէմի Բն-  
 Միւթի էլ Հան Էմին էլ Հիւսէինի Էֆէնտի:

● Միւսնայն առիթով, յանուն Ամեն. Ս. Պա-  
 տրիարք Հոր, Փոխանորդ Տ. Մկրտիչ Սրբազան և  
 Ա. Թարգման Տ. Տրդատ վարդապետ այցելու-  
 թիւն տուին Երուսաղէմի Քաղաքապետ վան-  
 Բաղդոյ Պէյ Նէշաշիլիի, Փոխ Կառավարիչ վան-  
 Բուհի Պէյ Ալթաէի Հասիի, և քաղաքին երեւելի-  
 ներէն վանք. Արթի Բաշայի Առաջին երկուքին  
 բացակայութեան պատճառաւ այցաբար ձգեցին

● Մարտ 14, Եւ. առաւ, Ամեն. Ս. Պատրիարք  
 Հոր կողմէ Փոխանորդ Տ. Մկրտիչ Սրբազան և  
 Գրեանապետ Տիար Կարապետ Նուրեան բարե-  
 դալուստ մաղթելու համար Պապական Նուրբակ  
 Ն. Գ. Մոնտինեօր վաշէրի վաշէրիօյի երկա-  
 թուղիի կայարանը գացին, բայց չկրցան հան-  
 գիցիլ Թիւրիմայութեան մը հետեւանքով. վասն  
 զի Լասին պատրիարքարանի կարգադրութեամբ  
 էլեզէն զմուսուրած է Ն. Գ. Մոնտինեօրը:

● Ի պատիւ Ն. Գ. Մոնտինեօր վաշէրի վաշէրիօյի.  
 տեղւոյս Լասինայ Պատրիարքարանին մէջ Թե-  
 յասեզան սարքուցեալ Մարտ 24-ի Կիրակի երե-  
 կայեան ժամը 4-6 Ամեն. Ս. Պատրիարք Հայրը,  
 ընդունելով իրեն եղած հրաւերը, ներկայ զբա-  
 նուցեալ այդ թէյասեզանին իր հետն ունենալով  
 Հոգ. Կերեղ Վրդ. Խրայէլիանը և Գրեանապետ  
 Տիար Կարապետ Նուրեանը:


● 27 Մարտ 1929, Զորեւելարթի ժամը 11.32ին  
 Պապական Նուրբակ Ն. Գ. Մոնտինեօր վաշէրի  
 վաշէրիօ, այցելութիւն տուաւ Ամեն. Ս. Պա-  
 տրիարք Հոր, և ընդունուցեալ Պատրիարքարանի  
 գահիճին մէջ, Ն. Ամեն. Սրբազանութեան, Լու-  
 սարարապետ և Փոխանորդ Սրբազաններու, և  
 Թարգման Տրդատ Վրդ. Տ. Կարեգին արեղայի  
 և Գրեանապետ Պ. Նուրեանի կողմէ, ապա եկե-  
 ղեցի իջնելով՝ աղօթեց Ս. Իլիսաղրի մասառնին  
 մէջ:

● Անգլիացի ծանօթ վիպասան Kipling Rudyard,  
 որ յանձնաօթս կը ծամրորէ իր տիկնոջ հետ,  
 Երուսաղէմ ալ եկաւ, և Պաղեստինի Պետական  
 Բարաուդար վանք. Վրդի ընկերակցութեամբ այցե-  
 լից Ս. Յակոբ Մարտ 27, Գշ. երկրոյին Նախ տե-  
 սաւ Ս. Յակոբի Դանարանէն հնագիտական Թան-

կազին առտրիաներ, որոնց մասին Լուսարարապետ  
 Մերսոպ Սրբազան պատմական տեղեկութիւններ  
 տուաւ: Յետոյ Պատրիարքարան ելլելով տեսակցե-  
 ցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հոր հետ, որ թէյասեզա-  
 նով մեծարեց իր յարգելի հիւրերը:

Ս. Պատրիարքը վապարեցաւ իմանալ Նշանա-  
 ւոր վիպասանին կարծիքը Մայր Արքեւի մասին.  
 —«Դեռ անձամբ չեմ ծանցած զինքն, Անգլիա վե-  
 րադարձիս կ'ուզեմ ծանօթանալ իրեն. բայց իր գոր-  
 ժներէն դատելով կ'ըսեմ թէ շատ մեծ ազգայնու-  
 ցող վիպասան մըն է Մայր Արքեւ» պատասխանեց:

Յարգելի հիւրեր իրենց սրանչացումը յայտնեցին  
 Ս. Պատրիարք Հոր Ս. Յակոբի մասին և մեկնեցան  
 շնորհակալութեամբ:



Ս. Աթոռոյս միարաններէն Հայր Գարիէլ Մալ-  
 խաստան վախճանեցաւ Ս. Քաղարիս Գրեանապետ  
 Հիւանդանոցին մէջ, 1929 Մարտ 12 Գշ. կէտօրէն  
 ետք ժամը 4ին, դեղնուկ հիւանդութեամբ, որուն  
 պատճառ եղած է լեղիի քաղցկեղը (Cancer de l'am-  
 poule de Vater): Բժիշկները յետ խորհրդակցութեան  
 հարկ տեսան զործողութեամբ փրկել հիւանդը, հար-  
 խիլին մէկ հաւանականութեամբ, դժբախտարար հի-  
 ւանդը հողին աւանդեց նշարակի ներքեւ:

Հ. Գարբիէլ ընիկ ՊապՅիցի (Կ. Պոլիս), որդի  
 Սարգսի և Մարիամու, ծնեալ 1875 Մայիս 7, ա-  
 ւագանի սնունդով Առաքել: Իր նախնական ուսումը  
 տուած է Ետի-Իուլէի Ս. Յակոբայ որբանոցին մէջ:  
 Ապա՝ լուսարար Ս. Փրկիչ Հիւանդանոցի մասրան:  
 Երեք անգամ Երուսաղէմ կ'երթեկէ, և վերջին  
 գալուն (1915) կը մանէ Ս. Աթոռիս միարանութեան  
 կարգը. չորս տարի կը ծառայէ իրեն ուրարակի,  
 1918 Հկտմ. 11ին սարիւսալ, իսկ 1922 Յուլի. 29ին  
 քահանայ կը ձեռնադրուի Պորթին. Փոխանորդ Գիր-  
 Տ. Մկրտիչ Եսո. Ազունուսիի ձեռով, և այնու-  
 նեակ կը ծառայէ Ս. Տեղեկու մէջ իրեն ժամարար:

Հանգուցեալը համեստ, բարեմոյն և ձեռքն  
 գործ երող գմանական մըն էր և օգտակար ծառայ-  
 ութիւններ կ'ընէր իր հոգեւոր պաշտօնին գատ:

Օձման կարգը կատարուցեալ Մարտ 13, Գշ.  
 առաւ Սրբոյ Յակոբանց Տաճարին մէջ: Ս. Պա-  
 տրիարքը ներկայ էր այս արարողութեան: Ս. Պատ-  
 րապետ մատոյց Հայր Գարեգին Պիլպիլիան, օձումը  
 կատարեց Լուսարարապետ Մերսոպ Սրբազան, որ  
 որ ժամը 9.30ին նախագանց յուրարիւտութեան  
 և թողման կարգին ալ: Հանգուցեալը թաղուցեալ Ս.  
 Փրկիչ վանքին գերեզմանոցը, վարդապետաց յա-  
 տակ բաժնին մէջ: Յուրարիւտութեան ներկայ  
 գտնուցան յոյն և դիտի եկեղեցականներ, որոնց  
 հետ բարեկամացած էր Հ. Գարբիէլ: Ս. Յարու-  
 թեան Տաճարին մէջ, իրեն պաշտօնակից: